

Գեղարքունիքի մարզում մինչև տարեվերջ կբացվի ութ նախակրթարան

2.10.2015

Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանի մոտ կայացած հանդիպում-քննարկումը նվիրված էր ՀՀ ԿԳ նախարարության 'Կրթական ծրագրերի կենտրոն'-ի կողմից Գեղարքունիքի մարզում ութ նոր նախակրթարաններ հիմնելու ծրագրի ընթացքին: Քննարկմանը մասնակցում էին ՀՀ ԿԳ նախարարության 'Կրթական ծրագրերի կենտրոն'-ի ներկայացուցիչներ, մարզպետարանի աշխատակազմի ԿՄՍ վարչության աշխատակիցներ, դպրոցների եւ մանկապարտեզների տնօրեններ եւ համայնքների ղեկավարներ: Համաձայն Գեղարքունիքի մարզպետարանի եւ ՀՀ ԿԳ նախարարության 'Կրթական ծրագրերի կենտրոն'-ի միջեւ ձեռք բերված պայմանավորվածության՝ նոր նախակրթարաններ կբացվեն Ծովագարդի միջնակարգ, Ճամբարակի N2 հիմնական, Ձորագյուղի հիմնական, Ծովասարի, Փամբակ-Դարանակի, Սարուխանի N1, Արծվանիստի միջնակարգ դպրոցներում եւ Մարտունու N1 մանկապարտեզում: Ծրագիրը ֆինանսավորվում է Համաշխարհային բանկի կողմից՝ համայնքապետարանների 25-50 տոկոս համաֆինանսավորմամբ: Ծրագրի իրականացման համար Համաշխարհային բանկը կներդնի 56 միլիոն 903 հազար, իսկ համայնքները՝ 16 միլիոն 771 հազար դրամ: Ծովագարդի միջնակարգ դպրոցում նախակրթարան բացելու համար Համաշխարհային բանկը կներդնի 5 միլիոն 600 հազար 292, Ճամբարակի N2 հիմնական դպրոցում՝ 9 միլիոն 83 հազար, Սարուխանի N1 դպրոցում՝ 7 միլիոն 52 հազար, Ձորագյուղի հիմնական դպրոցում՝ 9 միլիոն 124 հազար, Ծովասարի միջնակարգ դպրոցում՝ 6 միլիոն 402 հազար, Փամբակ-Դարանակի միջնակարգ դպրոցում՝ 2 միլիոն 552, Արծվանիստի միջնակարգ դպրոցում՝ 5 միլիոն 141 հազար եւ Մարտունու N1 մանկապարտեզում՝ 11 միլիոն 945 հազար դրամ: Ծրագիրն իրականացվում է երկու փուլով: Առաջին փուլում իրականացվում են միայն շինարարական աշխատանքներ, իսկ երկրորդ փուլը ենթադրում է գույքի ձեռքբերում եւ կահավորում: Քննարկմաման ընթացքում հայտարարվեց, որ ծրագրի առաջին փուլը մոտենում է ավարտին՝ մինչև հոկտեմբերի վերջ շինարարական աշխատանքներն արդեն ավարտված կլինեն, որից հետո կմեկնարկի երկրորդ փուլը: Մինչև տարեվերջ վերոնշյալ համայնքներն արդեն կունենան նոր ու գործող նախակրթարաններ: